«ՈՒՐԱՐՏՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

2009 թ. սեպտեմբերի 22–24-ը Երևանում տեղի ունեցավ «Ուրարտուն և նրա հարևանները» վերտառությամբ գիտաժողով՝ նվիրված հայ ուրարտագիտության նահապետ Նիկոլայ Հարությունյանի 90-ամյակին: Այն կազմակերպել էին «Արամազդ. մերձավորարևելյան ուսումնասիրությունների հայկական հանդեսը»՝ ամերիկյան "Project Discovery!" կազմակերպության դրամաշնորհով, Առաջավորասիական և կովկասյան ուսումնասիրությունների հայկական ասոցիացիան, ՀՀ - ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը, արևելագիտության ինստիտուտը և Հայաստանի գերմանական համալսարանը:

ԽՍՀՄ-ի անկումից հետո Հին Արևելքի ուսումնասիրության խորհրդային դպրոցը ծանր կորուստներ կրեց: Աշխարհում առաջատար խորհրդային ուրարտագիտությունը նրա ականավոր ներկայացուցիչների՝ Բ. Բ. Պիոտրովսկու, Գ. Ա. Մելիքիշվիլու, Ի. Մ. Դյակոնովի մահից հետո մարեց, և ուրարտագիտության կենտրոնը տեղափոխվեց Արևմուտք: Փաստորեն, վերացան Հայաստանի գիտական կապերը Ռուսաստանի և խորհրդային նախկին հանրապետությունների միջև, իսկ արևմտյան գիտության հետ նոր ստեղծվող կապերն այդ ոլորտում դեռևս թույլ են: Ուրարտուի և, ընդհանրապես, Հին Արևելքի վերաբերյալ ժամանակակից արևմտյան ուսումնասիրություններում համարյա չի հնչում Հայաստան անունը, չի հիշվում Հին Արևելքի և Հայաստանի պատմության ու մշակույթի շարունակական օրգանական կապը, չեն հղվում հայ գիտնականների աշխատությունները: Այս գիտաժողովը, ըստ կազմակերպիչների, պետք է ուղղված լիներ ոչ միայն նշելու հոբելյարի՝ խորհրդային ուրարտագիտության մեծ դպրոցի վերջին մոհիկանի վաստակը, այլև հիմք դներ հայկական և արևմտյան գիտության հետ նոր շփումների ու անձնական կապերի, որոնք այնքան կարևոր են գիտության զարգացման և առաջընթացի համար:

Գիտաժողովի կազմը, Հայաստանում անցկացվող նմանատիպ միջոցառումների համեմատությամբ, աննախադեպ էր: Նիկոլայ Հարությունյանի միջազգային ճանաչումը և կազմակերպիչների հեղինակությունը Հայաստան էր բերել մի շարք ճանաչված մասնագետների բազմաթիվ երկրներից (ԱՄՆ, Իսպանիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Գերմանիա, Ռուսաստան, Իրան), այդ թվում՝ ժամանակակից ուրարտագիտության ականավոր ներկայացուցիչներին՝ սեպագրագետներ Մ. Սալվինիին, Գ. Վիլհելմին, *հնագետ* Շ. Կրոլին*: Ներկա էին և Հին Արևելքի ուսումնասիրության նշանավոր այլ ներկայացուցիչներ՝ հնագետներ* Դ. Ստրոնախը, Մ. Ռոաֆը, *լեզվաբան* Ի. Յակուբովիչը *և այլք: Հայկական կողմից ներկա էին Ուրարտուի և Հին Արևելքի ուսումնասիրության մեր լավագույն մասնագետները՝* Մ. Խաչիկյանը, Ս. Հմայակյանը, Ա. Քոսյանը, Ե. Գրեկյանը *և այլք:*

Գիտաժողովը բացվեց «Արամազդ» հանդեսի գլխավոր խմբագիր, գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ Ա. Քոսյանի խոսքով: ՀՀ Կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը *հոբելյարին պարգևատրեց նախարարության ոսկե մեդալով: Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար* Վ. Բարխուդարյանը, *ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն* Ռ. Սաֆրաստյանը, *ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն* Պ. Ավետիսյանը, *ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր* Ս. Հարությունյանը:

Գիտաժողովին ներկայացվեց 25 զեկուցում, որոնցից 12-ը՝ արտասահմանյան գիտնականների կողմից: Ստորև ներկայացնենք որոշ զեկուցումներ՝ ըստ ուղղությունների:

Մեր ժամանակների ականավոր ուրարտագետ Մ. Սալվինիի *ելույթը, որը ներառում էր հնագիտական, պատմական, բանասիրական մոտեցումներ և վերլուծություններ, նվիրված էր ուրարտական սեպագիր նոր տեքստերի հայտնաբերմանը, դրանց մեկնաբանությանը և արդեն հայտնի տեքստերի հետ դրանց հարաբերությանը: Ուրարտուի պատմությանն էր վերաբերում նաև* Մ. Ռոուֆի *զեկուցումը՝ նվիրված Ռուսա Երիմենայորդի արքայի գահակալության թվագրության ճշգրտման հարցին:* Ա. Քոսյանը *ներկայացրեց Ուրարտուի արևմտյան սահմանամերձ շրջաններում (Մշո դաշտից մինչև Եփրատ) տիրող իրավիճակը մ. թ. ա. VIII դ. վերջերից մինչև VII դ. կեսեր, ընդ որում, Ռուսա II-ի շինարարական լայն գործունեությունը գնահատվեց որպես պաշտպանական միջոցառումների շարք՝ ուղղված տերության ամբողջականության փլուզման կանխմանը:*

Գիտաժողովում առավել լայն էին ներկայացված հնագիտական ուսումնասիրությունները, որոնցից մոտ մեկ տասնյակը հայաստանցի մասնագետների զեկուցումներն էին: Դրանց մեծ մասը նվիրված էր Հայաստանի տարածքում պեղված և պեղվող ուրարտական հուշարձաններին: Գիտաժողովի առաջին զեկուցումը Գ. Արեշյանինն էր և նվիրված էր Լեռնտի Մրովելիի մոտ ներկայացված՝ հայերի, վրացիների ու կովկասյան ժողովուրդների՝ մինևույն նախահորից ծագելու առասպելի քննմանը՝ որպես հին ժամանակների արձագանք՝ ներառյալ Ուրարտուն, մինչև վաղ միջնադար Հայկական լեռնաշխարհի ու Կովկասի մշակութային ընդհանրության: Դրան համահունչ էր Պ. Ավետիսյանի *ելույթը՝ նվիրված Հայկական լեռնաշխարհը առաջին անգամ որպես մշակութային մեկ ամբողջություն ձևավորած մ. թ. ա. IV–III հազարամյակների, այսպես կոչված, «Կուր-արաքսյան» մշակույթին (քննված մեկ հուշարձանի օրինակով), որը դիտվեց որպես պատմական նախադեպ լեռնաշխարհը միավորած առաջին հզոր կայսրության՝ Ուրարտուի համար:*

Ի. Կարապետյանը *ներկայացրեց Արգիշտիխինիլիի, իսկ* Ս. Դևեջյանը՝ *Լոռի բերդի պեղումների որոշ արդյունքներ:* Ս. Հմայակյանը *խոսեց վերջին երկու տասնամյակներում Հայաստանում ընթացող ուրարտագիտական ուսումնասիրությունների մասին:* Հ. Հակոբյանը *զեկուցեց միջնադարյան մի պատկերում Գրիգոր Լուսավորչի թիկունքում ներկայացված հեթանոսական տաճարի ճարտարապետության հին, նաև ուրարտական կապերի մասին: Հին աշխարհի և հատկապես*

Իրանի հին ճարտարապետության ականավոր մասնագետ Դ. Ստրոնախի *զեկուցումը նվիրված էր ուրարտական, մարական և աքեմենյան սյունազարդ դահլիճների ստեղծման պատմությանը:* Ք. Կոնրադ Պիլլերը *ևս զեկուցեց հնագիտորեն բացահայտվող ուրարտական և իրանական կապերի վերաբերյալ:* Շ. Կրոլը *խոսեց Ուրարտուի հարավարևելյան սահմանին գտնվող հայտնի պեղավայրի՝ Հասանլուի ուրարտական կապերի մասին: Ուշագրավ է, որ Հայաստանում անցկացվող ուրարտագիտական միջոցառումներից առաջին անգամ զեկուցումներ ներկայացրին նաև իրանցի գիտնականները (*Ռ. Հեյդարի, Ռ. Աֆիֆի*):*

Ժամանակակից խուռա-ուրարտական լեզվաբանության երկու ճանաչված ներկայացուցիչների՝ Մ. Խաչիկյանի *և* Գ. Վիլհելմի *ելույթները նվիրված էին ուրարտերենի քերականության բարդ խնդիրներին՝ համապատասխանաբար՝ հոդի կիրառությանը և բայի անձնական վերջածանցներին:* Ջ. Գրեպինը *փորձ արեց նոր նյութեր ներկայացնել հայ-հյուսիսկովկասյան լեզվական կապերի վերաբերյալ, որոնք, ըստ նրա, կարող են բացատրվել գիտության մեջ վաղուց ի վեր շրջանառվող՝ ուրարտերենի և հյուսիսկովկասյան լեզուների ազգակցության վարկածի շրջանակներում:* Ա. Պետրոսյանը *ներկայացրեց ուրարտական տեքստերում վկայված հայերեն բառեր և անուններ, որոնք վկայում են հնագույն հայերենով խոսող հանրության՝ վաղնջահայերի՝ Հայկական լեռնաշխարհում արդեն Ուրարտուի ձևավորումից առաջ գտնվելու մասին: Չնայած արևմտյան գիտության մեջ այս հարցի վերաբերյալ եղած որոշակի սկեպտիկ վերաբերմունքին, պարզ դարձավ, որ* Մ. Սալվինին *և* Գ. Վիլհելմը *միանգամայն դրական վերաբերմունք ունեն այդ հարցի վերաբերյալ, իսկ* Ի. Յակուբովիչը *հանձն առավ հոդված գրել, որտեղ կհիմնավորվի ուրարտերենի՝ հայերենից կատարված ևս մեկ կարևոր փոխառության փաստը (*մի *ժխտական մասնիկը): Արևմուտքի առաջատար գիտնականները հարում են այն տեսակետին, ըստ որի՝ ուրարտական կայսրության մեջ ուրարտերենի կրողները կազմել են երկրի իշխող վերնախավը, իսկ մնացած բնակչությունը խոսել է այլ, ուրարտերենից տարբեր լեզուներով, այդ թվում և հայերեն (այս մոտեցումը լավագույնս հիմնավորել է ամերիկյան գիտնական Պ. Զիմանսկին): Այս հարցի հետ համահունչ էր և* Ա. Մովսիսյանի *զեկուցումը՝ նվիրված ուրարտական հիերոգլիֆային արձանագրություններին, դրանց վերծանման պատմության և հնարավոր հայկական մեկնաբանության հարցերին: Հետաքրքիր է նշել, որ հնագիտական որոշ զեկուցումներում ևս փորձ էր արվում էթնիկական արմատներ վերագրել հնագիտական եղած նյութին: Այսպես,* Գ. Թումանյանը *խոսեց Հայկական լեռնաշխարհի որոշ դամբարանների կիմմերա-սկյութական ծագման, իսկ* Ն. Տիրացյանը *՝ ուրարտական դարաշրջանի կարասային թաղումների հնարավոր արևմտյան՝ խեթա-լուվական ակունքների մասին:*

Գիտաժողովը նվիրված էր ոչ միայն Ուրարտուին, այլև նրա հարևան հին քաղաքակրթություններին և մշակույթներին: Հ. Հմայակյանը *ներկայացրեց խեթական մշակութային մի տերմինի իր նոր քննությունը, իսկ* Ի. Յակուբովիչը *նոր մեկնաբանություններ և ստուգաբանություններ առա-*

ջարկեց Հայկական լեռնաշխարհի արևմտյան երկրամասի՝ Կապադովկիայի հնագույն անվանումների վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, գիտաժողովն անցավ կազմակերպված, միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան մակարդակով: Արտասահմանյան մասնակիցները, որոնց մեծագույն մասն առաջին անգամ էր այցելում Հայաստան, բարձր կարծիք կազմեցին Հայաստանի, նրա գիտնականների, գիտաժողովի կազմակերպման որակի, հայկական ավանդական հյուրընկալության մասին: Ստեղծվեցին նոր կապեր, ամուր հիմքեր դրվեցին հետագա համագործակցության համար: Գիտաժողովի նյութերը կհրատարակվեն «Արամազդ» հանդեսի երկու հաջորդական համարներում: Այդպիսի միջոցառումների շնորհիվ է, որ հայկական ժամանակակից ուրարտագիտությունը պետք է ներառվի միջազգային համատեքստ:

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ